ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/37

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ռինո» ՍՊԸ-ի 07.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ռինո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ռինո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 07.03.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ռինո» ՍՊԸ-ն ցանկանում է բողոքարկել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի գործողությունները՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բաց մրցույթի միջոցով «կուտակիչ մարտկոցների եվ անվադողերի» ձեռքբերման համար նախատեսված հրավերի և տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները, մասնավորապես՝ գնման առարկայի բնութագիրը: ՀՀ պաշտպանության նախարարության բաց մրցույթի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից 2-րդ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների պահեստամասեր 225/75R16 չափսի համասեզոն անվադողի

տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կազմելիս տեխնիկական բնութագիրը կազմվել է այնպես, որ դրան համապատասխանում է միայն մեկ ապրանքանիշի անվադողեր՝ GOODYEAR ապրանքանիշի անվադողերը, ինչպես նաև համեմատած նույն գնման առարկայի համար 2017թ. դեկտեմբեր ամսին կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/3 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական բնութագրի հետ՝ կատարվել է արագության ինդեքսի 40 կմ/ժ-ով բարձրացում և ներքին կառուցվածքը լինի – Silent Armor Technology կիրառմամբ բառակապակցության ավելացում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է /ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 225/75R16 համասեզոն) համասեզոն, նախատեսված ՈՒԱԶ, ՏՈՅՈՏԱ-ՀԻԼՅՈՒՔՍ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը – Silent Armor Technology, Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ ոչ պակաս T(190), անվադողի բեռնվածության ինդեքսը ոչ պակաս 104, անվադողի բեռնվածությունը /կգ ոչ պակաս 900/: Տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ ներքին կառուցվածքը լինի – /Silent Armor Technology/ կիրառմամբ, որը հանդիսանում է /GOODYEAR/ անվադողեր արտադրող ընկերության նորարարական տեխնոլոգիան: Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում մենք չենք հայտնաբերել որևէ ապրանքանիշի անվադողեր, որոնք արտադրվում են /Silent Armor Technology/ կիրառմամբ կամ ստացել են /GOODYEAR/ անվադողեր արտադրող ընկերությունից թույլտվություն նման տեխնոլոգիայի կիրառմամբ անվադողերի արտադրման համար: Այս պարագայում ստացվում է այնպես, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ–ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության բաց մրցույթի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից տեխնիկական բնութագրում նման պահանջ ներառելը ինքնաբերաբար

սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցության հնարավորությունը այդ գնման ընթացակարգին (2-րդ չափաբաժնի մասով) և ստեղծվում է մի իրավիճակ, երբ տվյալ գնման ընթացակարգին կարող է մասնակցել միայն մեկ ապրանքանիշի /GOODYEAR/ անվադողերը: Ստեղծված իրավիճակում մենք կարծում ենք, որ կազմված տեխնիկական բնութագիրը մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Լրացուցիչ ցանկանում ենք նշել նաև այն փաստը, որ համեմատած նույն գնման առարկայի համար /225/75R16 չափսի համասեզոն Անվադողի / 2017թ. դեկտեմբեր ամսին կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/3 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի շրջանակներում 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական բնութագրի հետ՝ կատարվել է պահանջվող անվադողերի արագության ինդեքսի 40 կմ/ժ-ով բարձրացում և ներքին կառուցվածքը լինի – /Silent Armor Technology/ կիրառմամբ բառակապակցության ավելացում: Այս պարագայում մեր կարծիքով նման փոփոխությունները կատարվել են ոչ թե տվյալ տեխնիկայի համար նման անվադողերի շահագործման հիմնավոր անհրաժեշտությունից ելնելով, այլ հնարավոր մասնակիցների շրջանակը կրճատելու և նրանց մասնակցության հնարավորությունը սահմանափակելու նպատակով: Ի հավելումն վերոնշյալի նախորդ տարիներին այդ տեխնիկայի համար և դրա շահագործման համար նախատեսված անվադողերի մասով սահմանվել է նույն տեխնիկական բնութագիրը առանց որևէ փոփոխությունների:

Կիրառելով Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բաց մրցույթի միջոցով «կուտակիչ մարտկոցների եվ անվադողերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի գործողությունների, որոշումների նկատմամբ «Ռինո» ՍՊԸ-ն պնդում է, որ դրանք չեն համապատասխանում Գնումների մասին ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:»:

Ի լրումն 07.03.2018թ. ներկայացված բողոքի «Ռինո» ՍՊԸ-ն 23.03.2018թ. գրավոր դիրքորոշմամբ Խորհրդին հայտնել է հետևյալը.

«Ցանկանում ենք անդրադառնալ ամենա էական և կարևոր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշման հատվածին: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացվել է NOKIAN անվադողերի վերաբերյալ սերտիֆիկատներ, որի մեջ ընդհանրապես նշված չէ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS

անվադողերի մասին, որոնք ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների պնդմամբ համարժեք են հրավերով սահմանված և պահանջվող 225/75R16 անվադողերին: Սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում ցանկանում ենք տեղեկացնել բողոքարկման խորհրդին այն մասին, որ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերը հանդիսանում են ամառային անվադողեր, քանի որ այդ անվադողերի սերտիֆիկատի մեջ նշված է /категория использования - нормальная/, որը նշանակում ամառային և/կամ ոչ ձմեռային անվադողեր, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության հրավերով պահանջվում են համասեզոնային անվադողեր: Նաև ցանկանում ենք նշել, որ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերի արագության ինդեքսը/կմ/ժ S (180) է, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության հրավերով պահանջվում է T (190): Նաև ցանկանում ենք նշել, որ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերը ներքին կառուցվածքը /Aramid Sidewall Technology/ կիրառմամբ է, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության հրավերով պահանջվում է /Silent Armor Technology /:

Համադրելով վերոնշյալ տվյալները և նույնիսկ ենթադրաբար ընդունելով, որ ինչպես ներկայացնում են ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները, որ նշելով /Silent Armor Technology/ կիրառմամբ, իրենք նաև միանշանակ դիտարկում են, որ /Aramid Sidewall Technology/ կիրառմամբ անվադողերը համարժեք են, սակայն ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները լռում են մյուս տեխնիկական բնութագրերի մասին, որոնք չեն համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին և նման շեղումով անվադողերի տեխնիկական բնութագիր ներկայացնելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության միանշանակ կմերժի մասնակցի հայտը: Ամփոփելով վերոնշյալը «Ռինո» ՍՊԸ-ն պնդում է, որ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերը համարժեք չեն ՀՀ պաշտպանության նախարարության հրավերով պահանջվող 225/75R16 անվադողերին, քանի որ 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերը ամառային անվադողեր են, 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերի արագության ինդեքսը/կմ/ժ S (180) է, 225/75R16 NOKIAN ROTIVA AT PLUS անվադողերը /Aramid Sidewall Technology/ կիրառմամբ են, գրավոր ոչ մի տվյալներ չկան և հիմնավոր չէ ՀՀ պաշտպանության նախարարության այն պնդումը, որ իրենք դիտարկում են այդ երկու տեխնոլոգիաները համարժեք, քանի որ հրավերով դա սահմանված չէ և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անցկացվող մրցույթները շատ խստապահանջ կերպով են անցկացվում և ցանկացած շեղում կամ տերբերություն նախնական

տեխնիկական բնութագրից ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դիտարկվում է ի վնաս մասնակցի և ոչ համարժեք:

Իսկ ինչ վերաբերվում է ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած հիմնավորմանը, թե իրենք նշելով ցանկացած արտադրող ապահովել են հնարավոր մասնակիցների մասնակցությունը տվյալ ընթացակարգին՝ մենք համարում ենք այդ հիմնավորումը անհեթեթություն հետևյալ պատճառներով.

«Քանի որ ցանկացած կամ գոնե մի քանի ընկերություն այդ տեխնոլոգիան չի կիրառում իր արտադրանքի մեջ /այդ տեխնոլոգիայի բացառիկ իրավունքը պատկանում է մեկ ընկերության/, բնական է նաև այն հանգամանքը, որ ցանկացած արտադրողի արտադրանքը չի կարող համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: Կարծում ենք, որ նույնիսկ ոչ մասնագիտական ուսումնասիրության և տվյալների համադրման արդյունքում պարզ է դառնում մեկ ճշմարտություն, որը համընկնում է բողոքաբերի այն պնդման հետ, որ ՊՆ կողմից հրավերի մեջ սահմանելով տարբեր պարամետրեր դրանք համապատասխանեցվել են միայն մեկ կազմակերպության կողմից արտադրվող անվադողերի տեխնիկական բնութագրին:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Որոշում ընդունել ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի կողմից կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու մասին:

2. Որոշում ընդունել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ դադարացնելու մասին, և/կամ որոշում ընդունել նոր գնման ընթացակարգ կազմակերպելու մասին:

3. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել փոփոխություններ կազմված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ, հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները կամ փոփոխություններով հանդերձ կազմակերպել նոր գնման ընթացակարգ:

4. ՀՀ Գնումների մասին օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան որոշում ընդունել ընթացակարգի կասեցման վերաբերյալ:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Ռինո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Միքաելյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.03.2018թ. թիվ ԴՎԱ/912 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 24.01.2018թ. հայտարարվել է անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հայտնում եմ, որ վերոհիշյալ մրցույթի 2-րդ չափաբաժնով ՀՀ պաշտպանության նախարարությունը հրավերով պահանջել է 225/75R16 «համասեզոն» նշանակության անվադողեր: Բողոքաբերի այն պնդմանը, որ տվյալ անվադողերի կառուցվածքը նշվել է «Silent Armor Technology», որին համապատասխանում են միայն GOODYEAR ապրանքանիշի անվադողերը, հետևաբար խախտվել է «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը, հայտնում եմ, որ տվյալ նշումը որևէ ապրանքանիշի մատնանշում չի պարունակում, այլ բնութագրում են այն կառուցվածքը, որը պետք է ունենա անվադողը և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապահովվել է «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները՝ այն է «ցանկացած արտադրող» բառերի կիրառումը, քանի-որ նույն տեխնալոգիան է նաև Aramid-ը: Իսկ բողոքաբերի այն պնդմանը, որ իրենց ուսումնասիրություններում իրենք չեն գտել այլ արտադրող տեղեկացնում եմ, որ առկա են առնվազն չորս արտադրողներ, բացի բողոքում նշված GOODYEAR ընկերությունը, համարժեք տեխնալոգիայով արտադրում են DUNLOP, NOKIAN, PIRELLI, MICHELIN ընկերությունները, որոնց արտադրանքի հետ կապված փաստաթղթերի պատճենները կից ներկայացնում եմ: Անդրադառնալով այն հարցմանը, թե ինչու ենք ցանկանում ձեռք բերել այդպիսի կառուցվածքով անվադողեր, ապա հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ. Գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տվյալ դեպքում նշված կառուցվածքով անվադողերը ապահովում են վազքի երկարաձգում և շահագործման բարձր անվտանգություն, նախորդ տարիներին ձեռք բերված նման կառուցվածքով վնասված անվադողով հնարավոր է եղել երթևեկել

բավականին երկար տարածություն, ինչը իր հերթին թույլ է տալիս առաջնագծից հեռու, արդեն անվտանգ գոտում կատարելու անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

Անդրադառնալով բողոքի երկրորդ մասին, հայտնում եմ, որ նախ արագության ինդեքսը բարձրացվել է ոչ թե 40 կմ/ժ, այլ 30 կմ/ժ արագությամբ, ինչը պայմանավորված է ոչ միայն անվադողի կառուցվածքային փոփոխությամբ այլ նաև տեխնոլոգիաների զարգացման դինամիկայով: Արագության ինդեքսի փոփոխման հետ փոփոխվում են նաև այլ պարամետրեր, որոնք բնութագրում են տվյալ անվադողը, ինչի հետևանքով երկարաձգվում է շահագործման վազքը և ապահովում է բարձր անվտանգություն: Նմանատիպ անվադողերի ձեռքբերման նպատակահարմարությունը առաջացել է նախորդ տարիների ընթացքում այլ մակնիշի ամենագնաց ավտոմեքենաների շահագործումից: 225/75R16 չափի և միաժամանակ 190 կմ/ժ արագության ինդեքս ապահովող անվադողերեր արտադրվում են բազմաթիվ ընկերությունների կողմից և կից ներկայացնում եմ որոշ ընկերությունների կողմից արտադրվող մոդելներ:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին պաշտպանության նախարարություն ներկայացուցիչներ Արմեն Սիմոնյանը, Դարբինյան Արայիկը և Պետրոսյան Սեթրակը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուդն ուսումնասիրել է «Ռինո» (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՍՊԸ-ի կողմից 07.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 16.03.2018թ. թիվ ԴՎԱ/912 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերը,Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ կուտակիչ մարտկոցների եվ անվադողերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժնի՝ ավտոմեքենաների պահեստամասեր (Անվադող 225/75R16 համասեզոն) ապրանքատեսակի համար սահմանվել են հետևյալ հատկանիշները՝ համասեզոն, նախատեսված ՈՒԱԶ, ՏՈՅՈՏԱ-ՀԻԼՅՈՒՔՍ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար, ներքին կառուցվածքը-SilentArmor Technology:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության բաց մրցույթի միջոցով գնման ընթացակարգի հանձնաժողովի և պատասխանատու ստորաբաժանման կողմից 2-րդ չափաբաժնով նախատեսված ավտոմեքենաների պահեստամասեր 225/75R16 չափսի համասեզոն անվադողի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը կազմվել է այնպես, որ դրան համապատասխանում է միայն մեկ ապրանքանիշի անվադողին, մասնավորապես՝ GOODYEAR ապրանքանիշի անվադողին:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը բողոքաբերի այն պնդմանը, որ տվյալ անվադողերի կառուցվածքը նշվել է «Silent Armor Technology», որին համապատասխանում են միայն GOODYEAR ապրանքանիշի անվադողերը, հայտնեց, որ տվյալ նշումը որևէ ապրանքանիշի մատնանշում չի պարունակում, այլ բնութագրում է այն կառուցվածքը, որը պետք է ունենա անվադողը և հայտնեց նաև այն, որ իրենց կողմից ապահովվել են «կամ համարժեք» և «ցանկացած արտադրող» բառակապակցությունների կիրառումը: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ բացի նշված GOODYEAR ընկերությունից, համարժեք տեխնալոգիայով անվադողեր արտադրում են նաև DUNLOP, NOKIAN, PIRELLI, MICHELIN ընկերությունները:

Խորհրդի այն հարցին, թե կարող է ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ բողոքում նշված գնման ենթակա ապրանքի հատկանիշները պատկանում են միայն ու միայն կոնկրետ արտադրողի՝ մասնավորապես GOODYEAR ապրանքանիշի արտադրանքին, և այն չի հանդիպում ոչ մի այլ արտադրողի համանման և համարժեք արտադրանքի մոտ, բողոքաբերը պատասխանեց, որ միայն կարող է ասել, որ իրենց ուսումնասիրությունների արդյունքում չեն գտել որևէ այլ արտադրողի համանման և համարժեք ապրանք:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Հրավերի տեխնիկական բնութագրերը կազմվել են Պատվիրատուի կարիքներին համարժեք և բնութագրերում ներառվել են, այնպիսի որակական չափանիշներ, որոնք անհրաժեշտ են և ոչ խտրական, և ցանկացած Մասնակից կարող է ներկայացնել դրանց համապատասխանող հատկանիշներով համարժեք ապրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:
- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին,

էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ընթացակարգի Հրավերի՝ 2-րդ չափաբաժնով նախատեսված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ռինո» ՍՊԸ-ի կողմից 07.03.2018թ. ներկայացված բողոքով չի հիմնավորվել և չի ապացուցել այն հանգամանքը, որ նշված գնման ենթակա ապրանքի հատկանիշները պատկանում են միայն GOODYEAR ապրանքանիշին և այն, որ որևէ այլ ընկերություն չի արտադրում նշված անվադողի հատկանիշներին համարժեք անվադողեր:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռինո» ՍՊԸ-ի կողմից 07.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**